


Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«16» մայիսի 2022 թ. թիվ 168 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ



ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ
2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ
(Նոր խմբագրությամբ)

ԵՐԵՎԱՆ- 2022

1. Սույն կարգով սահմանվում են մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնող ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետև՝ Կենտրոն) 2022-2023 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության կարգն ու պայմանները:
2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները, «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», Կենտրոնի կանոնադրությունը, այլ իրավական ակտեր:
3. Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի կրթական աստիճան և բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձև է:
4. 2022-2023 ուսումնական տարում մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով Կենտրոնի տնօրենի նախագահությամբ ձևավորվում է ընդունող հանձնաժողով: Քննությունների և հարցազրույցների անցկացման համար Կենտրոնի տնօրենի հրամանով ձևավորվում են նաև առարկայական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվում են տվյալ ամբիոնի վարիչը և համապատասխան դասախոսները:
5. Մագիստրատուրայի **առկա ուսուցմամբ անվճար համակարգ** տվյալ մասնագիտությամբ կարող են դիմել վերջին երեք տարվա ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված, ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բուհերի բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք, որոնք ավարտական աշխատանքի պաշտպանությունից և ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել են առնվազն 13 (20 բալանոց համակարգ) և բարձր միավոր, իսկ ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը /ՄՈԳ-ը/ առնվազն 13 է: Մրցույթային քննությունն անցկացվում է ըստ նախապես հրապարակված մասնագիտական հարցաշարերի:
6. Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա: Մրցույթի արդյունքների հավասարության դեպքում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում
ա) նախորդ կրթական մակարդակի ՄՈԳ-ը,
բ) ավարտական աշխատանքի և ամփոփիչ ատեստավորման քննության միավորների գումարը,
գ) հրապարակված գիտական հոդվածները,
դ) ընթացիկ տարվա շրջանավարտ լինելու հանգամանքը,
ե) ընթացիկ տարվա բանակից զորակոչված լինելու հանգամանքը:

7. Մագիստրատուրայի **առկա և հեռակա ուսուցմամբ վճարովի համակարգ** կարող են դիմել ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բուհերի շրջանավարտները: Նույն մասնագիտությամբ դիմորդների ընդունելությունը կատարվում է հարցազրույցով, եթե նրանց դիպլոմի հավելվածում գրանցված ՄՈԳ-ը առնվազն 13 է (կամ տվյալ բուհում սահմանված առավելագույն գնահատականի առնվազն 65 տոկոսը), կամ մրցութային՝ քննության ձևով, եթե ՄՈԳ-ը 13-ից ցածր է, կամ դիմել է իր մասնագիտությանը հարակից մասնագիտություններից որևէ մեկով: Քննությունը կամ հարցազրույցը անց են կացվում ըստ նախապես հրապարակված մասնագիտական հարցաշարերի:
8. Մասնագիտության փոփոխության պարագայում ընդունելությունը կատարվում է միայն վճարովի համակարգում: Ընդունելության վերաբերյալ որոշումները կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:
9. «Իրավագիտություն» մասնագիտությամբ ընդունելության մրցույթին կարող են մասնակցել բացառապես «Իրավագիտություն» կամ հարակից մասնագիտությամբ բարձրագույն կրթություն կամ գիտական աստիճան ունեցող դիմորդները:
11. «Ֆարմացիա» մասնագիտությամբ անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել միայն «Դեղագիտություն» և «Դեղագործական քիմիա» մասնագիտության շրջանավարտները, իսկ վճարովի ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Դեղագիտություն» և «Դեղագործական քիմիա» մասնագիտության և հարակից մասնագիտությունների շրջանավարտները:
12. Մագիստրատուրա ընդունվելու համար դիմորդները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ կամ առցանց դիմում են ներկայացնում հետևյալ հղմամբ՝ <https://www.isec.am/online-admission-form>՝ կցելով ստորև նշված փաստաթղթերի սքանավորված տարբերակները.
- անձնագիր/ նույնականացման քարտ,
 - բարձրագույն կրթության դիպլոմ և հավելված,
 - 3x4 չափի լուսանկար,
 - կցագրման վկայական կամ զինվորական գրքույկ,
 - հրատարակված գիտական հոդվածների ցանկ (առկայության դեպքում),
 - ընդունելության ծառայությունների համար գանձվող գումարի վճարման անդորրագիր:
13. Ընդունելության ծառայությունների համար գանձվող գումարի չափը սահմանվում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենության որոշմամբ և, անկախ ընդունելության արդյունքներից, ենթակա չէ վերադարձման:

14. Մագիստրատուրայի դիմում-հայտերի ընդունումը կատարվում է հետևյալ ժամկետներում.
Առկա անվճար համակարգ՝ հունիսի 1 - հունիսի 28,
Առկա վճարովի համակարգ՝ հունիսի 1 - օգոստոսի 20,
Հեռակա վճարովի համակարգ՝ հունիսի 1 -հոկտեմբերի 8:
15. Մագիստրատուրայի ընդունելության քննությունները/ հարցազրույցները կազմակերպվում են հետևյալ ժամկետներում.
Առկա անվճար համակարգ՝ մինչև հուլիսի 4,
Առկա վճարովի համակարգ՝ մինչև սեպտեմբերի 1,
Հեռակա վճարովի համակարգ՝ մինչև հոկտեմբերի 21:
16. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդների հրամանագրումը կատարվում է 15-օրյա ժամկետում, ուսման վարձը (տարեկան վարձի առնվազն 25%) վճարելուց հետո՝ ըստ մասնագիտությունների և մագիստրոսական ծրագրերի: